

Խորխե Կարերա Անդրադեն ծնվել է Էկվադորի մայրաքաղաք Կիտոյում 1903 թ. Սեպտեմբերի 28-ին: Գրականություն է ուսումնասիրել Իսպանիայում՝ Բարսելոնայի համալսարանում, ապա՝ Ֆրանսիայում:

1927-1928 թթ. եղել է Էկվադորի սոցիալիստական կուսակցության գլխավոր քարտուղար, այնուհետև դիվանագիտական ծառայություն է իրականացրել եվրոպական տարբեր երկրներում, Ասիայում, Հարավային Ամերիկայում:

Բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ <Չտեսնված լճակ> (El estanque inefable) լույս է տեսել 1922-ին, սակայն նրան ճանաչում բերեց <Լուրեր ծովից ու ցամաքից> (Boletines de mar y de tierra, 1930) ժողովածուն, որի առաջաբանը գրել էր Գաբրիելա Միստրալը:

Տպագրել է նաև <Աշխատանքի ժամը> (El tiempo manual, 1935), <Խնձորի կատալոգ> (Rol de la manzana, 1935), <Կենսագրություն թռչունների համար> (Biografia para uso de los pájaros pájaros, 1937) և <Լուսավորված պատուհանների ժամը> (La hora de las ventanas iluminadas, 1937) ժողովածուները:

Առաջին անթուղոգիան Անդրադեն տպագրել է 1942-ին՝ <Աշխարհի գրապահոցը> խորագրով:

<Ետագայում հանդես եկավ նոր ժողովածուներով <Այստեղ հանգչում է փրփուրը> (Aqui yace la espuma, 1950), <Պոետական տարեթվեր> (Edades poeticas, 1958), <Գիրք արքայի> (Libro del exilio, 1968):